



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 70741 գործարքներ, որոնց քանակը 2003թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 43.2%-ով: 2004թ. 9 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 29269 օտարման գործարքների 90.9%-ը կազմել են առուվաճառքները, 8.5%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 41.8%-ն արձանագրվել է Երևան քաղաքում իսկ 43.7%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2003թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 31.4%-ով: 2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 10681 առուվաճառքի գործարքների 65.3%-ը արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2003թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 5.1%-ով:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. 9 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/	
		9 ամիսներ 2004թ.	9 ամիսներ 2003թ.
Կենտրոն	350.0-970.0	449.9	376.9
Արաբկիր	250.0-560.0	351.3	269.5
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	216.7	161.5
Նոր-Նորք	115.0-250.0	182.2	130.3
Ավան	120.0-230.0	173.8	125.3
Էրեբունի	120.0-300.0	175.9	138.9
Շենգավիթ	120.0-270.0	198.3	136.9
Դավթաշեն	130.0-320.0	218.9	158.7
Աջափնյակ	120.0-300.0	197.2	137.5
Մալաթիա-Սեբաստիա	120.0-270.0	195.8	135.2
Նուբարաշեն	65.0-120.0	76.4	63.1
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	65.0-970.0	221.5	166.7

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների տարեկան աճը կազմել է 32.9%:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 4174 բնակարաններ, որոնց քանակը 2003թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 21.8%-ով:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. 9 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/	
			9 ամիսներ 2004թ.	9 ամիսներ 2003թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	64.0	61.9
	Ապարան	18.0-50.0	32.2	27.0
	Թային	18.0-40.0	29.3	24.5
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	55.7	53.7
	Մասիս	20.0-90.0	58.4	54.1
	Վեդի	20.0-60.0	37.9	31.0
	Արարատ	22.0-50.0	36.3	31.2
Արմավիր	Վաղարշապատ	35.0-110.0	90.1	81.4
	Արմավիր	21.0-80.0	54.9	44.5
	Մեծամոր	17.0-50.0	31.9	30.5
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	32.9	30.4
	Գավառ	20.0-50.0	32.5	30.0
	Մարտունի	18.0-60.0	32.8	29.0
	Վարդենիս	10.0-35.0	17.4	16.9
	Ճամբարակ	13.0-30.0	17.8	16.0
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	62.2	60.3
	Ստեփանավան	20.0-48.0	34.8	32.3
	Սյիտակ	17.0-50.0	32.6	23.3
	Այվերդի	15.0-40.0	25.9	25.2
	Տաշիր	15.0-40.0	22.7	19.0
Կոտայք	Աբովյան	40.0-150.0	89.9	81.2
	Նոր Հաճն	35.0-100.0	59.4	51.2
	Բյուրեղավան	15.0-60.0	39.4	35.0
	Եղվարդ	28.0-65.0	44.9	40.0
	Հրազդան	18.0-65.0	36.0	30.2
	Ծաղկաձոր	22.0-100.0	79.6	74.9
	Չարենցավան	13.0-55.0	35.9	30.6
Շիրակ	Գյումրի	30.0-110.0	73.0	68.2
	Արթիկ	17.0-45.0	28.5	25.0
	Մարայիկ	15.0-33.0	26.3	23.2
Սյունիք	Գորիս	21.0-50.0	33.7	29.2
	Կապան	18.0-52.0	32.2	28.5
	Սիսիան	17.0-48.0	31.9	27.2
	Մեղրի	18.0-58.0	25.3	25.0
	Ագարակ	18.0-50.0	25.1	21.0
	Քաջարան	13.0-30.0	19.1	18.0
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	36.3	34.7
	Եղեգնաձոր	20.0-60.0	47.9	46.4

	Ջերմուկ	18.0-90.0	44.0	40.4
Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	38.7	35.8
	Իջևան	23.0-80.0	45.3	40.1
	Բերդ	15.0-43.0	30.2	28.8
	Նոյեմբերյան	15.0-45.0	27.2	26.7

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների տարեկան աճը կազմել է 10.5%:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 4301 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 932, մյուս մարզերում միասին վերցրած՝ 3369: 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 38.4%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 12.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 47.8%-ով: 2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում գրանցված առանձնատների առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնքներ	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. 9 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/	
		9 ամիսներ 2004թ.	9 ամիսներ 2003թ.
Կենտրոն	255.0-1000.0	460.6	381.3
Արաբկիր	205.0-900.0	359.1	272.3
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	218.1	163.3
Նորք-Մարաշ	120.0-550.0	330.5	288.9
Ավան	125.0-280.0	176.1	126.8
Էրեբունի	130.0-320.0	178.4	140.2
Շենգավիթ	120.0-350.0	199.2	138.1
Դավթաշեն	140.0-700.0	220.0	160.0
Աջափնյակ	125.0-320.0	199.0	139.0
Մալաթիա-Մեքաստիա	125.0-300.0	197.4	136.6
Նուբարաշեն	65.0-150.0	77.6	62.9
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	65.0-1000.0	237.8	182.7

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների տարեկան աճը կազմել է 30.2%:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. 9 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/	
			2004թ. 9 ամիսներ	2003թ. 9 ամիսներ
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	84.3	81.9
	Այաքան	25.0-60.0	38.9	38.2
	Թալին	20.0-65.0	31.1	27.8
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	62.0	61.3
	Մասիս	50.0-90.0	63.1	61.8
	Վեդի	25.0-70.0	41.3	35.9
	Արարատ	20.0-65.0	39.4	36.7
Արմավիր	Վաղարշապատ	80.0-130.0	93.3	85.5
	Արմավիր	35.0-90.0	56.3	51.4
Գեղարքունիք	Սևան	20.0-60.0	36.9	36.1
	Գավառ	20.0-60.0	39.9	39.5
	Մարտունի	20.0-60.0	35.8	33.5
	Վարդենիս	15.0-50.0	21.3	20.8
	Ճամբարակ	15.0-50.0	20.1	18.6
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	69.6	67.4
	Ստեփանավան	15.0-60.0	36.2	32.8
	Սպիտակ	20.0-60.0	33.5	24.0
	Ալավերդի	15.0-50.0	26.6	25.7
	Տաշիր	15.0-55.0	23.3	19.5
Կոտայք	Աբովյան	70.0-120.0	94.6	91.3
	Նոր Հաճն	40.0-90.0	60.3	53.8
	Բյուրեղավան	25.0-70.0	40.9	37.7
	Եղվարդ	40.0-80.0	48.6	46.7
	Հրազդան	25.0-65.0	41.0	39.4
	Ծաղկաձոր	70.0-120.0	87.9	84.5
	Չարենցավան	25.0-65.0	36.9	33.2
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	91.4	89.1
	Արթիկ	20.0-55.0	30.2	28.0
	Մարալիկ	15.0-50.0	26.9	23.7
Սյունիք	Գորիս	20.0-60.0	34.9	31.1
	Կապան	20.0-60.0	33.4	30.4
	Սիսիան	20.0-60.0	32.7	28.1
	Մեղրի	15.0-50.0	28.2	28.1
	Ագարակ	15.0-50.0	27.7	23.6
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	37.7	36.4
	Եղեգնաձոր	35.0-80.0	49.6	48.7
	Զերմուկ	25.0-65.0	43.7	42.6
Տավուշ	Դիլիջան	20.0-70.0	41.6	38.8

Իջևան	35.0-80.0	46.1	40.7
Բերդ	20.0-60.0	31.4	30.5
Նոյեմբերյան	20.0-60.0	30.8	30.6

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների տարեկան աճը կազմել է 6.6%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 5768.33հա /այդ թվում 292.83 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 5096.49 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 5667.07 հա հողերի /այդ թվում 286.10 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 5011.31 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 41 միավոր /62.01 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր, որից 19-ը՝ /35.68 հա/ Երևանում և 3 միավոր /51.52 հա/ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

Օտարված 92.94 հա /այդ թվում 2.06 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 82.04 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 2290,46 հա, որից 2258,79 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Ստորև ներկայացվում է 2004թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը /բացառությամբ արդյունաբերության նշանակության և հատուկ պահպանվող տարածքների հողերի/.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորներ/ քանակը	Մակերեսը /հա/	Միավորներ/ քանակը	Մակերեսը /հա/	Միավորներ/ քանակը	Մակերեսը /հա/	Միավորներ/ քանակը	Մակերեսը /հա/	Միավորներ/ քանակը	Մակերեսը /հա/	Միավորներ/ քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	364	51.60	211	117.95	0	0.00	551	51.65	111	28.83
Արագածոտն	19	157.69	2	0.09	12	1.44	334	189.30	196	26.60	9	1.83
Արարատ	325	1094.11	637	69.05	18	5.60	781	310.23	429	37.00	0	0.00
Արմավիր	49	912.17	25	1.80	4	0.36	582	1346.62	222	21.73	5	1.42
Գեղարքունիք	0	0.00	24	2.70	3	0.84	41	47.73	35	4.42	3	0.62
Լոռի	0	0.00	0	0.00	1	0.01	138	107.30	43	5.25	9	1.10
Կոտայք	86	135.87	31	2.96	3	3.23	927	342.72	808	82.34	10	5.18
Շիրակ	1	5.00	4	0.08	5	0.33	157	155.32	53	2.93	3	0.05
Սյունիք	1	0.10	1	0.20	0	0.00	81	110.47	8	1.00	0	0.00
Վայոց Ձոր	7	38.38	41	5.69	10	1.92	41	12.35	16	1.03	2	0.69
Տավուշ	1	1.20	6	0.34	2	0.02	52	44.76	14	1.03	2	0.72
Ընդամենը	489	2344.52	1135	134.51	269	131.70	3134	2666.80	2375	234.98	154	40.44

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են հողերի 7603 առուվաճառքի գործարքներ /2003թ նույն ժամանակամիջոցում՝ 4437/, այդ թվում 3623-ը՝ գյուղատնտեսական նշանակության /2135/, 3935-ը՝ բնակավայրերի

/2277/, 41-ը՝ արդյունաբերական օբյեկտների /25/ և 4-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հողերի առուվաճառքներից 1655-ը իրականացվել են աճուրդների միջոցով /2003թ նույն ժամանակամիջոցում՝ 685/, այդ թվում 359-ը՝ /60.26 հա/ Երևանում /172/, իսկ 1296-ը՝ /2468.94 հա/ մյուս մարզերում /513/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 482 միավորը /2315.13 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /2003թ նույն ժամանակամիջոցում՝ 108/, 1061-ը՝ /127.15 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /537/, 103-ը՝ /25.00 հա/ հասարակական կառուցապատման /37/, 6-ը՝ /10.41 հա/ արդյունաբերական օբյեկտների /3/, և 3-ը՝ /51.52 հա/ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևանում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 2 գործարքներ:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 3623 գործարքներ, այդ թվում աճուրդով՝ 482, դատարանի վճռով՝ 24 և ուղղակի վաճառքով՝ 7 գործարքներ :

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	18	156.69	50.0	765.0	210.0	247	86.18	800.0	10000.0	2690.0
Ապարան						18	8.92	200.0	1700.0	430.0
Թալին	1	1.00	840.0	840.0	840.0	54	51.74	200.0	1680.0	440.0
Ծաղկահովիտ						12	36.48	170.0	2100.0	270.0
Արարատի մարզ										
Արտաշատ	195	342.57	25.0	18095.0	1450.0	310	97.93	740.0	12000.0	2110.0
Մասիս	44	162.85	130.0	97795.0	2920.0	197	80.26	400.0	8800.0	1330.0
Վեդի	84	578.72	35.0	2990.0	1435.0	264	126.95	450.0	7200.0	1300.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	190.0	45.0	45.0	45.0	120	229.07	650.0	4650.0	1355.0
Բաղրամյան	33	676.72	20.0	2310.0	1030.0	123	725.66	200.0	1500.0	510.0
Վաղարշապատ	15	45.45	150.0	26160.0	2790.0	332	386.03	980.0	14000.0	2240.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						9	2.10	420.0	1100.0	645.0
Ճամբարակ						1	0.79	100.0	500.0	200.0
Մարտունի						3	0.56	100.0	4000.0	730.0
Սևան						5	0.30	100.0	1000.0	385.0
Վարդենիս						22	39.33	60.0	1180.0	265.0
Լոռու մարզ										
Ալավերդի						56	41.92	360.0	5500.0	875.0

Գուզարք						12	2.98	500.0	6000.0	1660.0
Սպիտակ						5	1.60	500.0	3300.0	1000.0
Ստեփանավան						48	27.75	180.0	4000.0	450.0
Տաշիր						16	32.50	100.0	400.0	250.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	47	16.89	110.0	1480.0	805.0	578	119.15	600.0	20000.0	5310.0
Եղվարդ	14	86.80	135.0	3290.0	695.0	287	149.07	380.0	10000.0	3275.0
Հրազդան	22	25.97	130.0	4090.0	745.0	61	74.04	250.0	6000.0	845.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						109	96.38	550.0	2500.0	700.0
Ամասիա						9	19.70	80.0	525.0	185.0
Անի	1	5.00	400.0	400.0	400.0	19	21.28	240.0	800.0	290.0
Աշոցք						6	2.86	60.0	210.0	145.0
Արթիկ						13	13.19	140.0	800.0	295.0
Սյունիքի մարզ										
Գորիս						43	62.25	200.0	1600.0	440.0
Կապան	1	0.10	270.0	270.0	270.0			120.0	2000.0	330.0
Մեղրի						7	1.47	400.0	4240.0	840.0
Սիսիան						31	46.76	90.0	1500.0	315.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	25.18	185.0	396.0	315.0	31	9.26	260.0	4000.0	2020.0
Վայք						10	3.10	120.0	3400.0	860.0
Տավուշի մարզ										
Բերդ						9	2.82	100.0	2000.0	600.0
Իջևան	1	1.20	503.0	503.0	503.0	21	25.70	530.0	4000.0	1310.0
Նոյեմբերյան						22	16.24	100.0	8340.0	640.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 2595 առուվաճառքի գործարքներ, որից 763-ը աճուրդային վաճառքներ, 10-ը դատարանի վճռով և 8-ը ուղղակի վաճառքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

աճառքանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	800.0	312.0	312.0	312.0	179	193617	250.0	8000.0	2675.0
Ապարան						4	7810.0	250.0	1400.0	335.0
Թային	1	78.0	2232.0	2232.0	2232.0	13	64620.0	100.0	800.0	130.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	363	401094.0	20.0	2705.0	410.0	102	95744.2	300.0	6000.0	825.0
Մասիս	101	94350.0	210.0	1210.0	710.0	250	198120.0	300.0	20000.0	1020.0

Վեղի	171	192481.0	90.0	1270.0	450.0	75	73870.2	250.0	2200.0	620.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						48	43639.0	300.0	5000.0	945.0
Բաղրամյան						4	5640.0	180.0	600.0	210.0
Վաղարշապատ	25	18000.0	320.0	364.0	336.0	170	168011.0	300.0	10000.0	1500.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						17	25161.0	300.0	2000.0	580.0
Ճամբարակ						2	587.0	100.0	300.0	140.0
Մարտունի	14	16800.0	66.0	120.0	95.0	12	13600.0	200.0	600.0	250.0
Մևան	6	6800.0	100.0	155.0	130.0	4	4900.0	200.0	2000.0	255.0
Վարդենիս								100.0	300.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի						3	3225.0	150.0	600.0	210.0
Գուգարք						16	14239.0	150.0	5200.0	740.0
Սպիտակ						7	11050.0	140.0	900.0	175.0
Ստեփանավան						14	17193.0	100.0	600.0	160.0
Տաշիր						1	1330.0	100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	6	4569.0	95.0	920.0	250.0	311	291974.0	300.0	10000.0	1780.0
Եղվարդ	25	25000.0	90.0	90.0	90.0	455	494606.0	300.0	10000.0	2015.0
Հրազդան						40	35556.0	300.0	8000.0	1460.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						42	23060.7	250.0	3400.0	375.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի								150.0	400.0	185.0
Աշոցք						1	1700.0	90.0	300.0	115.0
Արթիկ	3	790.0	1690.0	4044.0	2475.0	8	3650.0	150.0	900.0	195.0
Սյունիքի մարզ										
Գորիս						5	7209.0	150.0	1200.0	390.0
Կապան	1	2000.0	30.0	30.0	30.0			150.0	1400.0	410.0
Մեղրի						1	390.0	150.0	900.0	230.0
Սիսիան						2	2400.0	150.0	900.0	245.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	39	48300.0	50.0	340.0	90.0	7	7433.0	150.0	2200.0	315.0
Վայք	2	8560.0	515.0	725.0	620.0	7	757.6	170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան	5	2800.0	150.0	478.0	390.0	13	9500.0	150.0	2200.0	590.0
Նոյեմբերյան						1	780.0	100.0	1400.0	210.0

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 118 գործարքներ 84.09 հա մակերեսով, ընդ որում 2-ը՝ Երևանում /1.47 հա/, 2-ը՝ Արագածոտնի /13.08հա/, 61-ը՝ Արարատի /15.68հա/, 4-ը՝ Արմավիրի /5.50 հա/, 9-ը՝ Գեղարքունիքի /4.56 հա/, 10-ը՝ Շիրակի /1095 հա/, 5-ը՝ Սյունիքի /5.63 հա/, 8-ը՝ Վայոց Ձորի /1.67հա/ և 17 -ը՝ Տավուշի /25.55 հա/ մարզերում:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6770 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 21.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 57.0%-ով:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 471 բնակարանների, 201 բնակելի տների, 1842

հասարակական, 201 արտադրական նշանակության օբյեկտների, 45 ավտոտնակների, 2 այգետնակի և 4008 միավոր հողերի վարձակալության գործարքներ:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 434 վարձակալության գործարքների քանակները 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ նվազել են 42.0%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալվել են 15290.04 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 147.86 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 14306.44 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության /որից 1451.20 հա նախկին պահուստային/, 169.24 հա բնակավայրերի, 372.83 հա արդյունաբերական օբյեկտների, 19.96 հա էներգետիկայի օբյեկտների, 12.70 հա անտառային, 144.51 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 39.00 հա ջրային, 77.50 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ մակերեսներ են արձանագրվել Արարատի մարզում՝ 3263.39 հա, որից 3223.55 հա գյուղատնտեսական նշանակության: 2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 4249.74 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	9	1065.00	329	1919.26
Արարատ	17	1982.00	223	1241.55
Արմավիր	0	0.00	104	1775.96
Գեղարքունիք	31	525.20	282	1210.86
Լոռի	4	17.00	145	642.47
Կոտայք	6	378.54	265	643.31
Շիրակ	4	117.00	222	1189.00
Սյունիք	5	165.00	131	588.56
Վայոց Ձոր	0	0.00	206	725.18
Տավուշ	0	0.00	29	120.54
Ընդամենը	76	4249.74	1936	10056.69

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5222 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.4%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 66.8%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 39.1%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /18.9%/, առանձնատների /15.4%/ և հողերի /15.4%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2733 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ աճել է 67.9%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 787.25 հա /այդ թվում 9.63հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 769.72 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Արարատի մարզում՝ 410.44 հա, որից 407.91 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 209 և 78 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.4%: 2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ մասնավորեցման գործարքների քանակն աճել է 22.1%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում 31.3%:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 11951 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2003թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 69.9%-ով:

Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /43.7%/: Առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն